

## ԴԻԱԼԱՎԱՐ ՄԵՐԻ ԶԱՎԱՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐ

### ՈՐԴԵԿՑՈՂ ՆՅՈՒԹԵՐՈՎ Թ-ՎՈՒՄՆԵՐ ՎԱՂՄԻՋՆԱԳԱՐՅԱՎՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վաղմիջնադարյան հայագանում տեղի ունեցած ընկերային-քաղաքական և կրոնական փոփոխությունները (ավագագիրական կարգերի հասպարում, քրիստոնեության ընդունում, հայոց պեղության անկում և այլն) իրենց անդրադարձն ունեցան նաև թաղման կառույցների ձեռավորման և ծեսի վրա: Վաղ միջնադարում մասսամբ շարունակվեց նախորդ շրջանի գերեզմանական կառույցների ձեռերի կիրառումը, իսկ թաղման ծեսը էական փոփոխություններ կրեց՝ հարմարվելով նոր կրոնի՝ քրիստոնեության գաղափարախտառությանը: Պարմական աղբյուրներն այդ մասին որոշակի տվյալներ են պարունակում: Փավարության դրույթը կազմում է, որ Ներսէս Ա. Մեծ Կաթողիկոսի օրոր (353-373 թթ.) Աշխարհապատճեն գումարված եկեղեցական ժողովի ժամանակ (353 թ.), այլ որոշումների թվում ընդունվեց նաև թաղման ընթացքում քրիստոնեավայել պահվածը ունենալու անհրաժեշտությունը: Ըստ այդմ քրիստոնյաների համար մահացածը միայն ննջեցյալ պետք է համարվեր, ուստի: «առ յոյսն յարութեան ցուցաներ ունել ակնկալութիւն. և զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միւս անգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութեամբ ի վերայ զնացելոցն օճիրս զործիցն լայեաց կրծոյն, զանառակորթիւնս աշխարհին դնելոյ. այլ յուսով Տեառն զալսրեանն ակն ունել և յարութեանն նորոգութեան, և իրաքանչիր զործոցն զյահիրենական հարուցումն առնուլ իրաքանչիր յոյս ունելով աւոր զալսրեանն Տեառն սպասել»<sup>1</sup>: «Կողարկավորությունը պետք էր կարարել սաղմոնական օրինություններով, կանքելներով և վառած մոմերով: Իսկ Մովսէս Խորենացին շարունակում է, որ Ներսէսն արգելեց, ըստ հեթանոսական սովորութեան, ողբալը<sup>2</sup>: Քրիստոնեավայել թաղման լավագույն օրինակ է Մեսրոպ Մաշտոցի հուղարկավորությունը. «Չոր առնալ Վահանայ և Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհական ամբոխի, սաղմոսիր և օրինութեամբ և հոգեւոր ցնծութեամբք, կանքելոր վառելովք և ջահիրը բորբոքելովք և խնկօք բուրելովք և ամենայն լուսաճաճանչ զնոյին, և այնու խաչանշան լուսա-

1 «Փաւարոսի Թիսովանորացոյ Պագմոնի Հայոց», աշխ. Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1912, էջ 117:

2 Տե՛ս «Մովսէսի Խորենացոյ Պագմոնի Հայոց», Տիֆլիս, 1913, էջ 280:

որ յառաջախաղաց նշանաւն, յօշականն ելանէին, և անդ ի մարդիրոսարանն մաքուցեալ, զօրինաւոր յիշարակն կափարեալ, ապա նշանն աներևոյթ լինէր, և նորա յիրաքանչիր դառնային տիելիսն»<sup>3</sup>: Այդ առունով ուշագրավ է նաև Յիզրուզիփի հուղարկավորությունը. «Եւ հաւաքացեալքն եկին առ իշխանսն, և ինդրեցին բառնալ զմարմին սրբոյն. և նորա հրամայեցին առնուլ զնա: Յայնժամ դիմեաց Հայրապետքն քահանայիր և ժողովրդովք. և բարձեալ զպակուական մարմին սրբոյն՝ փարան ի մեծ եկեղեցին Դունայ. և եղին ի փապանի սաղմոսիր և օրինութեամբ և զիսան մասուն արարեալ՝ բաշխեցին ամենայն հաւաքացելոց: Այս եղին յառաջին ամի թուականութեանս հայոց, այն է յամի 552»<sup>4</sup>:

Հայապանի հնավայրերում միջնադարյան թաղումները մասնակիորեն են պեղված՝ ելեներով հուշարձանների վերին շերտերը հետացնելու անհրաժեշտությունից: Դա, մասամբ, բացաբրվում է միջնադարյան զերեզմաններում նյութական զբանունների բացակայությամբ: Քրիստոնեական թաղումները հիմնականում սպորգեալիքնյա կառույցներ են և դրանց գրեղը ցուցող վերգերնյա կոթողներ, որոնք միրված են վառ պահելու հանգույցյալի հիշարակը:

Անդիկ դարաշրջանում թաղման կառույցների ամենաբարաձված ձեւը սալարկոյայինն էր, որը մ.թ. Բ. դարից ասդիմանաբար փոխարինում է հիմնահողային և կարասային ձևերին: Կամախի դիրքը դառնում է ուղիղ, մեջքի վրա պառկած, ձևորերը հանգույցներ են և կամ որովայնին, կամ կրծքին, իսկ ուղեկցող նյութը մեկ կամ երկու իր է:

Վաղ միջնադարյան նմանաբիա թաղումների մասին առավել սպառիչ գրեղեկություններ են փալիս Թալին բնակավայրը հյուսիսից գովեստող բլաշարերի սպորտում փարաձված դամբանադաշիքի պեղումները<sup>5</sup>: Այսպես պեղված անդիկ շրջանից վաղ միջնադար անցման ժամանակի թաղումները բացահայտում են թաղման ձևսի վերաբերյալ ուշագրավ փյալներ, որոնք Եսայի Ասաբրյանին թույլ են փվել հանգելու հետեւյալ եզրակացությունների:

1. Գ. դարից սկսած կողասալերի քանակը մեծանում է, առանձին դեպքերում հասնելով 8-ի ի փարբերություն նախկինում ուղղահայաց դրված չորս-հինգ սալի:

2. Ավելանում է նաև ծածկասալերի քանակը:

<sup>3</sup> Կորին, Վարք Մաշտոցի, բնագիրք, ձևագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջանում և ծանոթագրությունը ի ձեռն պարֆ. դ-ր Մանուկ Արեղյանի, Երևան, 1941, էջ 94:

<sup>4</sup> Մ. Վեգերեսի, Լաւագար վարք և վկայարամություն Սրբոց, որը կամ ի հին Տօնացոցի Եկեղեցոյ Տայառանեայց, հ. Ժ., Վենետիկի, 1814, էջ 238:

<sup>5</sup> Տե՛ս Ռ. Պետրոսյան, Ողջերը և մնացածները (մահը և անմահությունը հայ ավանդական աշխարհընկալման համակաղղում), «Գիրություն և գիտմիկա», 2003, թ. 6-7, էջ 54-60. Նոյնին՝ «Խաչքարը և իշխառակի միջնադարյան բնելություն», «Հայոց պարբուծյան հարցեր», զիր. Խոդվածների ժող., Մեսրոպ արք. Աշճեան մարտնչայր 9, Երևան, 2005, էջ 195-215:

<sup>6</sup> Տե՛ս Ե. Ասաբրյան, Վաղ միջնադարյան թաղումների նորահայր ձեւեր. Համբառեարական գիրական նարաշրջան նվիրված 1984-1985 թթ. ազգագրական և բանագիրական դաշտային հեգուազությունների հանրագումարին, գեկուցումների թեզեր, Երևան, 1987, էջ 4-6:

3. Կապված քրիստոնեական թաղման ծեսի հետ՝ մեծանում է դամբարանների երկարությունը, հասնելով մինչև երկու մետրի:

4. Ուղղությունը միայն արևելք-արևամուգը է, իսկ որոշակի շեղումները կապված են փարփառ ընթացքում արեգակի ծագման դիրքի հետ, որով հիմնականում կողմնորոշվել են թաղումները կարարելիս:

Նոր երևոյթ է արևելյան ուղղահայաց սալերի վրա խաչ փորագրելը և թաղելը հողի փակ<sup>7</sup>:

Թալինի դամբանադաշիքից հետո սալարկդային թաղումներ են բացվել Ազարակի 2001-2002 թթ. պեղումների ժամանակ<sup>8</sup>(նկ. 1): Շնավայրի առաջին հարթակի երկու փեղամասերում՝ հարավային ափորով (վեց գերեզման) և հյուսիս-արևմարդյան հարթակած (ութ գերեզման), պեղվել են վաղ քրիստոնեական գերեզմաններ<sup>9</sup>: Գերեզմանները կառուցված են ճեղքած սալերով, որոշ գերեզմաններում դրանք գերաբարերի հետ համարված են (թ. 1, 2, 6, 7)<sup>10</sup>:

Վաղ միջնադարյան սալարկդային թաղումներ պեղվել են նաև Էջմիածնում (նկ. 2a/b), Ջրվեժում<sup>11</sup>, Արորի զյուղում<sup>12</sup>, Աղցրում<sup>13</sup>, Օշականում (2002 թ. պեղումներ), Գողարանում: Սալարկդերը և սարկոֆազները ծածկվում են նաև երկանց փապանաքարերով, որոնք երբեմն արձանագիր են և հանդիս են զայիս Ե. դարից սկսած: Երկանց փապանաքարով գերեզմանները կարենու աղբյուր են վաղ միջնադարյան թաղման կառույցների անվանումների, այս շրջանում գործող անձանց ինքնությունը պարզելու համար: Դրանք պարկանում են որոշակի հասարակական դիրք գրադեզնող անհապների:

Արձանագիր (երկարագիր) փապանաքարի վաղագույն օրինակը հայտնի է Թալինից (ՆՊՄ-թ. 2661). այն կրում է եռաբող հետեւյալ արձանագրությունը (նկ. 3).

### ՅԻՇԵՎ Տ(Ե)Ր Ա(ՍՈՒՎ)Ծ (ՔՈ) Ա

### ՆԱՐԺՎԸ ԱՂԱԽԻՇՆ

### ԶԱՐՈՒՇԵՆ<sup>14</sup>:

7 Տե՛ս անդ, էջ 5:

8 Տե՛ս Ի. Կարապետյան, Ն. Ենգիբարյան, Ազարակի դամբարանային համապիտները (նախնական հաղորդում). «Հայասքանի հնագույն մշակույթը», 2, Էնճա Խանզայանի հորելյանին նվիրված գիրքաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 58-65:

9 Ծոփրակալություն ենք հայրնում պեղող հնագետ Ի. Կարապետյանին բավարար հաղորդելու համար:

10 Թաղումների մասին մասնակի բաղեկությունների, դիմարկումների և նվազների համար երախսապար ենք հնագետ Գ. Թումսնյանի:

11 Տե՛ս Ա. Ժամկոչյան, Ջրվեժի վաղմիջնադարյան դամբարանագիր պեղումները. ՊԲՀ, 1986, թ. 1, էջ 220-225:

12 Տե՛ս Կ. Պեղրոսյան, Ա. Նորսոյան, Արորով վաղ միջնադարյան դամբարանագիր պեղումները. Շնավերական աշխարհանքները. Հայասքանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), 1, Երևան, 1993, էջ 131:

13 Տե՛ս Կ. Միմոնյան, Աղցրի հուշարձանախմբի 2001 թ. պեղումները. «Հին Հայասքանի մշակույթը», XII, Երևան, 2002, էջ 114:

14 «Գրի հավերժությունը», Յուցահանդես հայ գրաբառության 500-ամյակի առիվ, Երևան, 2012, էջ 26:

Շար ուշագրավ է Էջմիածին քաղաքի մշակոյթի տան մով պեղված բազիիկ եկեղեցու մերձակայրում հայրնարերված երկլանջ շիրմաքարը հետևյալ դապանագրով (նկ. 4):

**ԱՅՍ ՏԱՊԱՆ ԽԵԶԱՆԱ ԿՊՈՆԵՊԱՏ ԴԱՏՐԿԻ Է  
...ԱՌՈՒԵ (Ղ)ՆԵՒՑ ՏՆ ՈՐԴԻՌՅ**<sup>15</sup>

Արձանագիր դապանաքարով մի քանի գերեզմաններ հայրնարերվել են Հայաստանի այլ շրջաններում, մասնավորապես Ջրվեժում՝ Ն. Տոկարսկու պետությունի ժամանակ<sup>16</sup>:

Նմանագիր երկու դապանաքար հայրնի են Դվինի Կաթողիկե եկեղեցու շրջապատից և ունեն մեկական տող արձանագրություն՝ առանց թվականի<sup>17</sup> (նկ. 5a/b): Երկլանջ մեկ այլ դապանաքար պահպան է ՀՊ թանգարանում և արձանագրության բովանդակության համաձայն՝ այն Գնթունյաց Դավիթ իշխանի գերեզմանաքարն է<sup>18</sup>:

Եւփարքիք է, որ Գնթունյաց նախարարական դրույթի անդամին պարկանող երկրեր դապանաքար հայրնարերվել է Զովունիի դամբարան-աղոթարանի (Ե. - Զ. դր.) շրջակայրից. Գոգարանի վաղ միջնադարյան եկեղեցու մերձակայրից ես հայրնի է Գնթունյաց դրույթի պատկանող և Հ. - Ձ. դր. թվագրվող դապանաքար<sup>19</sup>: Նմանագիր դապանաքարեր դրվել են նաև դամբարանային կառույցների ներսում: Դրանցից է Վրբավագդ Կոմսարականի՝ Նախիջևանի (Վրեմբյան Շիրակ) դամբարանում բացված դապանաքարը:

Երկլանջ դապանաքարերը հարաբերում են մինչեւ Ձ. դար: Այս դարաշրջանով թվագրվող դապանաքարեր հայրնի են Ձ.ալինից, Սեւանի թերակղզոց, Վրցախի Գյավուրկալա կոչվող բնակավայրից<sup>20</sup>: Ավելի ուշ շրջանի դապանաքարերը թեև շարունակում են պահպանել երկրերությունը, սակայն ավելի բարձր են ու վեր ձգված:

Վաղ միջնադարյան դապանաքարերի հետագա ուսումնասիրությունը կարևոր աղբյուրագիրական հիմք կարող է հանդիսանալ, նաև լրացումներ կադարել հիշյալ ժամանակական պահպանությունը գործող անձանց գործունեության, ընկերային դիրքի, կոչումների և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

15 Տե՛ս Գ. Կարախանյան, Գ. Սարգսյան, Կ. Մելքոնյան, Դ. Նարությունյան, Հայաստանի վաղ միջնադարի նորանայր հուշարձաններ. «Բանքեր Երևանի համալսարան», 1992, թ. 2, էջ 159-160:

16 Տե՛ս Հ. Մ. Տօկարսկու, Ջքրեց II, Յօհաննես Առաքելական Եկեղեց, 1957 թ., ԱՊԱ, թ. 8, Երևան, 1959, էջ 45-46:

17 Տե՛ս Կ. Ղափաղարյան, Դվինի քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 244-245:

18 Տե՛ս անդ, էջ 245:

19 Տե՛ս Գ. Սարգսյան, Վիմագրագիրական էսքիզներ. ԴԲՀ, 2008, թ. 2, էջ 202-204:

20 Տե՛ս «Դվինի հայ վիճագրության», կազմով Ս. Բարխուդարյան, պրակ V, Վրցախ, Երևան, 1982, էջ 135-136. Ա. Շահինյան, Բարիլի քաղաքային թանգարականի հայերն արձանագրությունները. «Լրաբեր», 1976, թ. 6, էջ 89-93:



Ակ.1



Ակ.2ա



Ակ.2բ



Ակ.3




Ակ.4



Ակ.5ա



Ակ.5բ



Նկ.6



Նկ.7



Նկ.8



Նկ.9



Նկ.10



Նկ.11



Նկ.12



Նկ.13

Թեև քրիստոնեական ծեսով արգելվում էր հանգույցյալի հետ իրեր դնելը, սակայն հանդիպում ենք նաև որոշակի նյութեր պարունակող գերեզմաններ: Այդպիսին է Զրվեմում պեղված մանկական սարկոֆազային թաղումը, որը հայրնաբերված չըրա ուղունքներն ու երեք կնիքները ծառայել են որպես հմայիլ և, բար ուսումնասիրողի, դրանք պիտի փրկելին երեխային մահվան պարճառ հանդիսացող հիվանդությունից<sup>21</sup>:

2011 թ. Թ-եղութիւ արշավախումբը Բաղերի ճալա կոչվող հանդամասում պեղեց քրիստոնեական ծեսով հինգ հիմնահողային թաղում<sup>22</sup> (նկ.6): Թ-աղումները համաժամանակյա չեն, քանզի կմախքները գրնվում էին գարբեր մակարդակների վրա (նկ.7): Նույնականացներից մեկը երեխա էր, որին էլ, հավանաբար, պարկանում էին գրածուները: Պեղումների արդյունքում հայրնաբերվել են սարդիոնե զնդաձեւ, քազմանիսք ուղունքներ (4 հար. նկ.8) և մեկ կախիկ (նկ.9), ապակե մածուկից ուղունքներ՝ երկարավուն, գլանաձեւ (17 հար. նկ.10), կապավուն ապակուց պարբասրված ուղունքներ գարբերի՝ զնդաձեւ և գակառաձեւ (10 հար. նկ.11): Ներաքրիցի է բալազոյն ապակե ուղունքը, որը գունավորված է երկարի օրինակով\* (նկ.12): Առավել ուշագրավ հայրնազործությունը հազուարի ամրացման համար նախարեւած բրոնզե իրն է (նկ.13): Այն բարակ լարից է, կենքրոնական մասում ունի պարուրաձեւ փաթույթով հարված: Մի կողմում ոնին բրոնզե, շեղանկյունաձեւ հավելազարդ: Նմանօրինակ հազուարված այլ հնավայրերից մեզ առայժմ հայրնի չէ:

Նյութեր պարունակող ուշագրավ թաղումներ հայրնաբերվել են նաև Չիչխանավանքի եկեղեցու շրջակայի գերեզմանների պեղումներով: Եկեղեցու արեւմբյան հարվածքում բացված քարարկդային թաղումներում կմախքների կոնքուսկրերի մոտք հայրնաբերվել են ձիթաճրագներ: Տարբեր թաղումներից ընդհանուր առմամբ հայրնաբերվել են 25 գարագիսակ ճրագներ, որոնք փաստում են պարմիջների հաղորդած գեղեկություններն առ այն, որ քրիստոնեական թաղումներ կապարվում էին սաղմոսներով, բոցավառ կանքելներով և ջահերով: Թ-աղումներում հայրնաբերվել են նաև բրոնզե և պղնձե մաքանիներ, ապարանջաններ, կախիկ, վարսակալներ<sup>23</sup>:

Թ-ալինի դամբանադաշտի վաղմիջնադարյան թաղումները եւս պարունակում են ուղեկցող նյութեր:

Թ. 31 դամբանից գրնվել է սարդիոնե մաքանի՝ վերին հարթ մասով, առանց փորագրության: Ազարակի վաղ միջնադարյան թաղումից հայրնի է

21 Տե՛ս Ա. Ժամկեցյան, նշվ. աշխ., էջ 224:

22 Թ-աղումների մասին գեղեկությունների, գրամադրած լուսանկարների և հայրնաբերված կյոթերի համար երախափափություն և հայրնում Թ-աղութիւ արշավախմբի ղեկավար պ.գ.թ. Ս. Նորոյանին:

\*Բնորոշում՝ երկարան, պ.գ.թ. Խաչագործ Մելիքսեթյանի, որի համար հայրնում ենք մեր երախափափությունը:

23 Տե՛ս Ա. Նայրանդյան, Տ. Ալեքսանդրյան, Չիչխանավանը (2008 - 2010 թթ. պեղումների արդյունքները. նախնական հաղորդում). «Հուշարձան փարեզիրը», Է., Երեսան, 2011, էջ 108-109, 111:

բրոնզե մատանի, որի բնում ազուցած է օվալաձև կապոյլք ակ՝ վրան փորագիր սաղավարդանման զիխարկով վազող մարդու պարկեր<sup>24</sup>: Թալինի թ. 45 մանկական թաղումից գրնչած մատանին բրոնզե բարակ, ուղղանկյուն զիխիկով զարդ է՝ վրան փորագիր բազմաթիւ ասպրդ, իսկ թ. 39 և թ. 51 դամքարաններից հայրնարերված երկարեւ մատանիներն ունեն պարզ, ողաձև տիեզր: Նմանօրինակ մատանիներ հայրնի են բակավին ուշ անդիկ դարաշրջանից (մասնավորապես Վաղարշապարի<sup>25</sup>, Արքաշապի<sup>26</sup>, Գառնիի<sup>27</sup> պեղումներից) և շարունակում են գործածվել հետքայում<sup>28</sup>:

Ուստի պարահական չէ, որ զերեզմանագողությունը միջնադարում բարածված երեսույթ էր և այդ մասին փասբեր են վկայված Կանոնագրքում: Գրիգոր Լուսավորչի կանոններում հիշապակվում է այն պարիմների չափը, որոնց կարող են ենթարկվել զերեզման կողոպարողները. «Որ զզերեզման բանայ առ անձուկ՝ Դ. ամ արքարոյ և Ա. ի ներքս», «Որ զդիս կողոպարին՝ ԺԵ. ամ արքարոյ և Ա. ի ներքս»: Մեկ այլ կանոնով մահապարիծ է սահմանվում դիակողոպուրի համար, եթե մեղավորը մեղա չզա, իսկ խոսքովանելու դեպքում նա մինչեւ կյանքի վերջ ապաշխարություն չի կարող սրանալ<sup>29</sup>:

Այս ամենը փասբում է, որ թեև քրիստոնեական գաղափարախոսությունը արգելում էր ննջեցյալների հետ իրերի թաղումը, սակայն ավանդութային ուժով մինչ օրս կ շարունակվում է հանգույցյալի հետ հարկապես անձնական իրեր դնելու սովորույթը:

24 Տե՛ս **Ի. Կարապետյան**, **Ն. Ենգիբարյան**, Ազարակի դամքարանային համալիրները, էջ 59:

25 Տե՛ս **Ժ. Խաչատրյան**, **Ա. Թորոսյան**, Նյուֆեր Վաղարշապարի հյուսիս-արևելյան դամքարանադաշտից. «Լրաբեր», 1976, թ. 5, էջ 100, բախ. III/ 8. **Ա. Քալանթար**, Շին Վաղարշապարի պլատմաները. Հայաստան. քայլե դարից միջնադար. Երևան, 2007, էջ 338, 340:

26 Տե՛ս **Ժ. Խաչատրյան**, Արքաշապի II, էջ 82:

27 Տե՛ս **Ե. Առաքելյան**, Հայոց գանձարանի համարակալությունը 1951 - 1955 թ., ( античный период), APA, թ. 7, Ереван, 1957, էջ 78. **Ջ. Խաչատրյան**, Гарни V, античный некрополь (результаты раскопок 1956 - 1972 гг.), APA, N 15, Ереван, 1976, էջ 121-12:

28 Տե՛ս **Ե. Նալբորյան**, նշվ. աշխ., էջ 55-62:

29 Տե՛ս «Կանոնագիր Հայոց», Գիրք Ա, աշխ.՝Վ. Նալբորյանի, Երևան, 1964, էջ 108, 247:

## РЕЗЮМЕ

The socio-political and religious significant changes which took place in early medieval Armenia were also reflected in burial structures and ritual, which are more conservative areas of society. If some previous well-known burial structures were continued in the early medieval period, then ritual manifested fundamental changes, accommodated with the ideology of new Christian religion.

Historical sources give us more information about names of the buried, but they keep silent about the architectural details and style of their burials. In this paper we are trying to identify the name of funeral structures, which we know from ancient sources, with discovered burials during archaeological excavations.

## SUMMARY

Значительные социально-политические и религиозные изменения, произошедшие в раннесредневековой Армении, нашли свое отражение как в погребальных сооружениях, так и в ритуале, являясь более консервативными сферами общества. Если некоторые предыдущие известные структуры захоронения продолжали бытовать в период раннего средневековья, то ритуал подвергается коренным изменениям, приспособляясь с идеологией новой христианской религии.

Исторические источники дают нам информацию о названиях некоторых похорон, но молчат об их архитектурных деталях и стиле захоронений. В данной работе сделана попытка определить имена некоторых структур захоронений, которые нам известны из письменных источников, с новонайденными захоронениями, обнаруженными во время археологических раскопок.

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՎԱՅՐՆ  
պարմական գիր. դոկտոր

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ ԻՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Մկրտիչ Սարգսյանի «Գրիգոր Նարեկացի» պարմավեպում (Երևան, 1989) գեղարվեաբական շնչով վեր են հանվում հանճարեղ փաղերզոի կյանքի ալեհոյզ ելեւէջները՝ հասարակական-քաղաքական իրողությունների լայն ընդգրկմամբ։ Գրիգոր Նարեկացու մասին սկզբնաղբյուրներում եղած աղքափիկ գեղեկություններն ի մտի առնելով՝ գրողը վարպետորեն հյուսում է նրա կյանքի ուշագրավ դրվագները՝ ժողովրդի կեցության ոլորդի պարկերման հետ միաժամանակ։ Ընթերցողի առջև հառնում է ուսայնաշունչ ժամանակների համայնապարկերը։ Մեր առջև է եւ մեզ հետ Գրիգոր Նարեկացին՝ հանճարեղ մրածողն ու փաղերզուն, մարդասերը՝ սիրուր ծվագող հեծեծանքներով, հոգին լլուղ խոհերով։ Վասպորական աշխարհի հոչակավոր Նարեկավանքի աղոթամբունջ լուսության մեջ փաղերը երկնող բանասրելով մեզ է ներկայանում իր ապարամբ Լությամբ, ընդվզուն ողով՝ մեղադրվելով թոնդրակյանների նկեղեցամերժ աղանդին հարելու մեջ։ Նարեկացին ապրում է ծանր ողբերգություն՝ չկարողանալով ազարվել հակասական խոհերից, քանի որ, ինչպես նշում է Մկրտիչ Սարգսյանը, այդ աղանդին հարելը «կնշանակեր դավաճանել Ասքծոն ու Եկեղեցուն և հակառակը։ Եւ բանասրելոն ապրեց այս դժվարին դրաման՝ ինքնարգկրմամբ, ինքնաձաղկումով, ինքնայրումով։ Ծառացավ Ասքծոն դեմ, ընդվզեց և անիծեց թոնդրակյաններին։ Քննության առավ աշխարհի սեւն ու սպիրակը» (Էջ 16)։ Թեև Նարեկացին մոտ 1003 թ. Մոլուխ Կճավ զլուտի մուրակայքի Ս. Ասպարածին վանքի միաբան և նշանավոր գիլդուն Մուշեղի դեմ գրեց իր «Թուղթը»՝ նզովելով թոնդրակյաններին («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498-502), սակայն Սարգսյանը, զեղարվեաբորեն պարկերելով Գրիգոր Նարեկացու և Մուշեղ Վարդապետի հարաբերությունները, դրական երանգներ է հաղորդում դրանց (այս մասին խոսք կլինի սպորեն):

«Պարմավեպը, - գրում է Մ. Սարգսյանը, - պարմության վերայցելությունն է դեպի մեր օրերն ու ժամանակները և պարմական փորձի հաղորդումը մեր սերունդներին» (Մ. Սարգսյան, Լոյս լեռան պես, Երևան, 1990, էջ 261)։ Եւ եթե պարմավեպի հերոսը «լայն աղերսներ չոնի արդիականության հետ, ապա